

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Արևիկ Շիրակի Թորոսյանս, որպես ՀՀ արդարադատության նախարարության Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության փորձագետ, 2021 թվականի օգոստոսի 18-ից մինչև 2022 թվականի փետրվարի 18-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- 1) Մշակել եմ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 20-ի N 403-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:
- 2) Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հիմնադրույթ պիլոտային փուլի շրջանակներում իրականացրել եմ հարցաշարերի պատասխանների կազմման, զեկույցի նախագծի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքներ:
- 3) Իրականացրել եմ միջազգային և ներպետական օրենսդրության և դատական պրակտիկայի ուսումնասիրություն:
- 4) Օրենսդրական նախագծերի մշակման աշխատանքների շրջանակում ուսումնասիրել եմ Ազգային ժողովում մշտական էթիկայի հանձնաժողով ունեցող երկրների լավագույն փորձը:
- 5) Օրենսդրական փոփոխությունների առաջարկների կազմման նպատակով ուսումնասիրել եմ հակակոռուպցիոն մասնագիտացմամբ դատախազություն

կամ դատախազության ստորաբաժանում ունեցող երկրների փորձը, մասնավորապես՝ Ոսկրահնայի դատախազության համակարգը:

- 6) Mulberry2 էլեկտրոնային համակարգով պատրաստել եմ մոտավորապես 30 փաստաթուղթ (ներքին և արտաքին շրջանառության):
- 7) Իրականացրել եմ 2019 թվականի հոկտեմբերի 3-ի ռազմավարությունը և դրա իրականացման «2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշումից բխող միջոցառումների կատարմանն ուղղված այլ աշխատանքներ:

Արևիկ Թորոսյան՝
17.02.2022

